

ես եւ ոչ դոցա . որպէս եւ արարին իսկ»
(Էջ 353) :

Արդեամբք ալ փախստականները կը վերադառնան Լվով եւ աղաներու առջեւ կը բարեխօսեն Սիմէոնի մասին . «Եւ նոքա ժողովեալ զԺերակոյտն եւ զամենայն ժողովուրդն ի խորհուրդ՝ զրեցին ինձ, զի երթայց ի Լով առ նոսա : Իսկ ես փութով հասեալ՝ ասեն ցիս . Կամիմք զի զաս աստ՝ տղայս մեր ուսուցանել . . . : Եւ ես կամաւորեցայ . . . Եւ ես քանզի զահրով էի՝ ծախեցի զտունս ու տեղս եւ զամենայն ինչ . եւ առեալ զկինս եկի Լէվ, Թվ. ՌՉԳ (1624), օգոստոս ժԵ : Եւ վարազայ Սաչին Թէսլիմ արին զԴպրատունն եւ զտղայս : Եւ տուին ինձ քարէ տուն ի շրիթալն՝ կենալ առանց վարձու» (Էջ 355) :

1624էն սկսեալ կը պաշտօնավարէ Սիմէոն Լվովի Դպրատան մէջ իբրեւ ուսուցիչ¹⁸ : 1627ին, երբ ի Լվով երկրորդ անգամ ժահտամահ կը ծագի, ինքն ալ կը հարկադրուի փախչիլ ընտանեօք եւ կ'երթայ «ի Բոհաթին գեղաքաղաք մի թ' մղոն հեռի ի Լովայ . եւ կացաք անդ տնով երեք ամիս եւ

¹⁸ 1628 յունիս 16ին «ի մայրաքաղաքն Լէվ կ'օրինակուի Գր. Նիւսացոյ (Նեմեսիոսի) բնութեան եւ կազմութեան գիրքը «օգնութեամբ երկց աշակերտացս մանկագունից եւ ահասից, որ ի արհեստս բազում աշխատեալ եւ այս զիրս նոր եւ առաջին հանեալ, Պօղատանի Սաչբո, Եուսքոյի Միսքո եւ Մէրիկի Հանգոյ» (Էջմ. 466, Թղ. 181ա—բ) : Ասոնք առանց տարակուսի Սիմէոն զպրի աշակերտներն են :